Կազմեց Պ. Վ. ԲԱԼԻՑԿԻՆ
Խմբագրությամբ Ի. Ս. ՖՈՒՐՄԱՆԻ

ՀՈՒՇԱՏԵՏՐ

ԱՊԱՇՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ ՍՈՑԱՊԱՇՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

368.4
Բ-20

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՑԵՐԿՐԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԳՐՈՇ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ—1936

36-4
Ca2662
1 MAR 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Դոնկասի սպառողական աշխատողների արհմիության կենտրոնական կոմիտե

368.4
Բ-20

ՀՈՒՇԱՏԵՏՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ ՍՈՑԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կազմեց Պ. Վ. ԲԱԼԻՑԿԻՆ
Խմբագրությամբ Ի. Ս. ՖՈՒՐՄԱՆԻ

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉ ԻԲՅՈՒՆ «ԳՐՈՇ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ—1936

27.02.2013

44.051

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄԵՍՐՈՊԻ ԱՆՎԱՆ

56245-66

Հրատարակելով ներկա «Հուշատետրը», Միության Կենտկոմը նպատակ ունի ծանոթացնել յուրաքանչյուր ապահովագրական պատգամավորին և պրոֆակտիվիստին ապահովագրական մուծումների հաշվման, գանձման և ժամանակավոր անաշխատունակներին տրվելիք նպաստի նշանակման և վճարումների ստուգումների տարբերական կանոններին, որը նշանակալից ոգնություն ցույց կտա ապահովագրական պատգամավորներին նրանց նոցապահովագրության գործնական աշխատանքներում։

«Հուշատետրը» կազմված է սոցապահովագրության մասին գոյություն ունեցող օրենսդրության հատաձայն և «Հուշատետրով» կարող է ոգտվել ամեն մի ապահովագրական պատգամավոր և պրոֆակտիվիստ իբրև տեղեկատու և ուղեցույց սոցապահովագրական աշխատանքների կարգի մասին։

Միության Կենտկոմը հայտնում է, որ «Հուշատետրը» կազմված է Կովկասի Սպառկոոպերացիայի աշխատողների պրոֆսիության կողմից սպասարկվող տնտեսական սիստեմի համեմատ։

Վորևե հարցերի առաջացման դեպքում գրեցեք այդ մասին հետևյալ հասցեով. *ЦК союза — Ростов Дон; Энгельса, 77, Дворец Труда.*

Կովկասի Սպառկոոպերացիայի աշխատողների
Միության Կենտկոմ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ—ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՄՔՆ Է ՍՈՑԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Ապահովագրական պատգամավորը հանդիսանում է պրոֆկազմակերպությունների առաջին ոգնականը՝ նրա սոցապահովագրական աշխատանքում և մեր միության անդամների նյութական-կենցաղային սպասարկման գործում։

Միայն սոցապահովագրական պատգամավորի ոգնությամբ, ներգրավելով նրան սոցապահովագրական աշխատանքում, պրոֆկազմակերպությունը կարող է հարկ յեղած բարձրության վրա դնել սոցապահովագրության գործը։

Ամենից առաջ ապահովագրական պատգամավորը պետք է լավ ծանոթ լինի տեղկոմների կամ Շրջկոմների (Ռայխմարկոմների) համար սահմանված սոցապահովագրության նախահաշվի հետ, գիտենալ իր բոլոր ապահովագրվածներին, նրանց ապահովագրական տարիքին և անթույլ հետևել սոցապահովագրման ուղղությամբ ապահովագրյալի կողմից ժամանակին արվելիք մուծումներին։

Բայց միայն սոցապահովագրական մուծումների գանձման պլանի կատարումով չի վերջանա սոցապահովագրական պատգամավորի աշխատանքը։ Նա սիստեմատիկորեն վերահսկում և ստուգում է տնտեսական կազմակերպությունների սոցապահովագրական մուծումների կանոնավոր հաշվումը, հետևում է հաշվային փաստաթղթերի ներկայացման և դիմում է բոլոր օրինական միջոցների՝ սոցապահովագրական մուծումների պարտքերի վերացման համար։

Բացի դրանից, մեծ աշխատանք է դրվում սոցապահովագրական պատգամավորների վրա՝ գործնական ոգնություն ցույց տալու պրոֆմիությունների՝ ժամանակավոր անաշխատունակների, հրդիությանն և անուղղի համար նշանակվելիք նպաստներիառթիվ ծագած հարցերի լուծման հարցերում։

Սոցապահովագրական պատգամավորը վճռական պայքար է մղում կեղծակերպումների (САМУЛЯЦИЯ) և առանց հարգելի պատճառների գործաթքումների դեմ, կատարում է ընկերական վերհսկողություն տներում, հետևում է բժշկի նշանակած ռեժիմի պահպանման և ոգնություն է ցույց տալիս խնամատար հիվանդ ընկերներին։

Սոցապահովագրական պատգամավորները պետք է ուշադիր լինեն մեր միության անդամների կուլտ-կենցաղային սպասարկման կազմակերպման և բարելավման գործին, ակտիվ կերպով մասնակցեն սոցապահովագրական միջոցների ճիշտ տրման աշխատանքին և ուշադրություն ստուգեն, թե պրոֆկազմակերպությունները վորքան ճիշտ են բաժանում այդ միջոցները նշանակված նպատակների—սանատորիաների և կուրորտների, բաղանիքների, ընտանիքների, անհատական-մայրերի նյութական ոգնության, հատուկ սնունդի, մանկապարտեզների, պիոներական ճամբարների, մանկական սանատորիաների համար և այլն։

Պրոֆկազմակերպությունները գործնական ոգնություն ցույց տալով սոցահովագրական պատգամավորներին և սերտ կապ հաստատելով նրանց և աշխատանքի պաշտպանության տեսուչների աշխատանքներում, զբաղվում են սոցապահովագրան աշխատանքների ծավալման և ապահովագրյալների նյութական դրության բարելավման գործը

Յուրաքանչյուր պրոֆկազմակերպիչ և տեղկոմ պետք է ունենա մեկից վոչ պակաս ապահովագրական պատգամավոր՝ ամեն 10—15 աշխատողից, ընտրված միության անդամների ընդհ. ժողովում։

«Միայն սոցապահովագրական աշխատանքների արմատական բարելավումով, հատկացված միջոցների նպատակահարմար և լիովին ոգտագործումով, հիվանդությունների և տրավմատիզմի (ճզմվածություն, վնասվածություն) նվազեցման, հանգստյան տների և սանատորիաների ուղեգիրների ճիշտ ոգտագործման համար մղվող պայքարով ձեռք կբերվի կենդանի մարդու հանդեպ ցույց տրվելիք ամենորյա հոգատարության մասին ընկեր Ստալին ցուցմունքների իրագործումը»։

ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

Ապահովագրական պատգամավորները շատ դժվար չգիտեն ինչպես ձեռնարկել սոցապահովագրական մուծումների ճիշտ հաշվման և ստուգման աշխատանքներին, ինչից սկսել և ինչ անհրաժեշտ փաստաթղթեր պահանջել ստուգվելիք կազմակերպություններից, վորպեսզի պարզ լինի նրանց համար, թե տնտեսական կազմակերպություններն ինչպես են կատարում իրենց պարտականությունը սոցապահովագրության մասին։

Ամենից առաջ անհրաժեշտ է հիշել, վոր ապահովագրական պատգամավորն աշխատում է իր պրոֆկազմակերպության հետ սերտ համագործակցությամբ և նրա անմիջական ղեկավարությամբ։

Ձեռնարկելով տնտեսական կազմակերպությունների ստուգման գործին, ապահովագրական պատգամավորը նախապես իր պրոֆկազմակերպությունից պետք է ստանա ստուգման նպատակի և կարգի, ինչպես նաև պահանջելիք փաստաթղթերի ստուգման և զանազան բացատրությունների համար ունեցած իրավունքների մասին վորոշ ցուցումներ։

Եթե սոցապահովագրական պատգամավորը, անցնելով ստուգման, նկատի սոցապահովագրությանզործածվորևե որինազանցություն ստացած առաջադրությունից դուրս, անմիջապես պետք է հայտնի այդ մասին իր պրոֆկազմակերպությանը։

Ի՞նչպես պետք է ձեռնարկվի ապահովագրական մուծումների ճիշտ հաշվառումների ստուգման։

Նախ՝ ապահովագրական պատգամավորը տնտեսական կազմակերպության ապահովագրական հաշվումների և վճարման գործը տարող աշխատողի (սովորաբար հաշվապահի) հետ նայում է ստուգման ժամանակաշրջանում բանվորներին և ծառայողներին վճարված ռոճիկների վճարային տեղեկագիրը և ուրիշ փաստաթղթերը։ Դրա համար պետք է ոգտվել կազմակերպության հաշվեպլանի «Բանվորներ և ծառայողներ» հաշվեբաժնի տվյալներից, ստուգելով հաշվապահության ներկայաց-

ված այն արդարացուցիչ փաստաթղթերը, որոնք հաստատում են, որ ռոճիկներում չեն մտցված այն տեսակ վարձատրումներ, որոնք յենթակա չեն ապահովագրական հաշվումների։

Բացի դրանից, ապահովագրական պատգամավորն ստուգում է կազմակերպության հաշվեպլանի ծախսերի բաժինը, հայտնաբերելու համար այն ռոճիկները, որոնք յենթակա յեն ապահովագրական մուծումների հաշվարման (տնտեսական, տրանսպորտի, նորոգումների և այլն)։

Գումարելով մուծումների հաշվի ընդհանուր գումարը, ապահովագրական պատգամավորն ստուգվող հաշվապահությունից պետք է պահանջի ապահովագրական հաշվին մուծված բանկի ստացագիրը և համեմատի, թե ինչքան և համապատասխանում մուծված գումարն ստուգվածի համաձայն ստացված գումարին։

Ստուգումը վերջացնելուց հետո կազմվում է ակտ, ստորագրված Ռայխմբկոմի, ապահովագրողի և ապահովագրական պատգամավորի կողից։ Յեթե ապահովագրողը մերժի ստորագրելու, այդ մասին նշվում է ակտում՝ յուցաբերելով մերժման պատճառը։ Ակտի մի որինակը մնում է ապահովագրողի մոտ, իսկ մյուսը հանձնվում է պրոֆկազմակերպության։ Ակտում ապահովագրական պատգամավորը նշում է, թե ինչ պետք է անի ապահովագրողը և ինչ ժամկետում նա պարտավոր է հաշվել ապահովագրական մուծումները և կազմված ակտի համաձայն լրիվին փակել հաշիվները։

Յեթե ապահովագրողը պետք յեղածից ավելի յե վճարել ապահովագրական մուծումները, ավելի

վճարված գումարն անցնում է նրա ապագա մուծումների հաշվին։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄԸ

Բոլոր պետական, կոոպերատիվ և հասարակական ձեռնարկությունները և հաստատությունները աշխատավարձի վճարումների համար Բանկից փող ստանալու մասին ներկայացրած պահանջի հետ միաժամանակ, պրոֆմիությունների կենտկոմի № 158300 ընթացիկ հաշվին պետք է անցկացնեն պետական ապահովագրման համար նրանցից պահանջված մուծումները։

Ս յապահովագրական մուծումները հաշվվում է կազմակերպություններից յուրացված ապահովագրական տարիֆների և այդ կազմակերպությունների իրենց բանվորներին և ծառայողներին վճարած աշխատավարձի համաձայն։ Այսպես, որինակ, յեթե տվյալ կազմակերպության աշխատավարձի ֆոնդը 10,500 ռուբլի յե, իսկ ապահովագրական մուծումների յուրացված տարիֆը հավասար է 15,7 տոկոսի, բազմապատկելով այդ յերկու թվերը — 10,500 × 15 7, և դեն գցելով վերջի յերեք թվերը՝ գումարը կլորացնելու նպատակով, ստացվում է վճարվելիք ապահովագրական մուծումների գումարը — 1,648 ռուբլի։

Ապահովագրական մուծումները գանձվում են կազմակերպության՝ բանվորներին և ծառայողներին վճարած աշխատավարձի ամբողջ գումարից, առանց հաշվելու գանձումների և տուրքերի համար յեղած հանումները (յեկամտահարկ, կուլտուրական, բնակարանային գանձումներ և այլն)։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐ, ՎՈՐՈՆՑ ՎՐԱ ՀԱՇՎՎՈՒՄ ԿԱՄ ՉԻ ՀԱՇՎՎՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐ

Ապահովագրական մուծումներ հաշվվում են	Ապահովագրական մուծումներ չեն հաշվվում
1. Ամեն տեսակ աշխատավարձերի ժամանակավոր վարձի, արտաժամյա, գործարքային, գերաշխատանքի, գիշերային ժամերի, բնակարանի և կոմունալ սպասարկման համար վճարված փողի, բնական պարենավորման արժեքի, փոխհատուցման վճարի, արձակուրդի և հանգստյան որերի համար, պարգևատրման վարձատրումների (փողով և բնամթերքով), տոկոսային վարձատրությունների, ձրի բնակարանների, կոմունալ սպասարկման և վառելիքի հատկացումների, պարապուրդների համար, վճարքի, ծառայության տարիների համար աշխատավարձի ավելացման վրա և այլն։	1. Հեղինակի վարձատրությունը պայմանագրերի համաձայն։ 2. Իր գործիքներով, զգեստով և այն ոգտվելու համար տրված փոխվճարների համար։ 3. Ծառայությունից հեռացվելու դեպքում տրված արձակման նպաստի և յեռամսյա ճամբարային հավաքույթների համար տրված մնացորդ նպաստի համար։ 4. Գյուտարարության և ռացիոնալիզատորության համար տրված պարգևները։ 5. Գործուղումների համար տրված որավճարի, տեղափոխման վճարի և որավճարի փոխարեն հաստատավելացումների համար։ 6. Գրական աշխատությունների վճարի այն աշխատակիցներին, վորոնց պարտականության մեջ չի մտնում այդ աշխատանքը։ 7. Ճաշարանային նպաստը, աշխատակիցների սնունդի բարելավման համար։

Ապահովագրական մուծումներ հաշվվում են	Ապահովագրական մուծումներ չեն հաշվվում
	8. Բժկվելու և ժամանակավոր անաշխատունակության նպաստի համար։ 9. Նվեր սոցմրցակցության և հարվածայնության համար և նվեր հասարակական աշխատանքների համար։ 10. Ցերկաթուղային, ջրային և տրանսպորտի համար տրված ձրի տոմսերի համար։ 11. Աշխատողներին տրված հատուկ-ճարպերի արժեքի համար 12. Բանվորներին տրված հատկազգեստի արժեքի համար։ 13. Հասարակական ձեռներեցության ոնների կարգով աշխատանքների (շաբաթոցյակներ, ինդուստրացիայի որերի և այլն) վճարումների համար։

(ԽՍՀՄ Կենտգործկոմի յեվ Ժողկոմխորհի 1931 թ. ոգոստոսի 23-ի վորոշումից)

Այդ պատճառով, ապահովագրական մուծումների ճիշտ հաշվումների ստուգման ժամանակ հարկավոր է ուշադրություն դարձնել այն բանի վրա, վոր ապահովագրական մուծումները հաշվվեն վոչ թե միայն հիմնական վճարային տեղեկագրով վճար-

ված աշխատավարձը, այլև մի շարք հավելյալ այն աշխատավարձերը, որոնք բանվորներն ու ծառայողներն ստանում են գանձարկղային կամ հուշամատյանի որդերներով, յենթահաշվային գումարների հաշվետվություններով և այլն։

Վորոշելով ապահովագրական տարիֆների յուրացված ճշտությունը, հարկավոր է տնտեսական կազմակերպությունից պահանջել այսպես կոչված «Գրանցումների տեղեկություն» կամ «Ծանոթություններ ապահովագրյալին» և համեմատել նրանց ապահովագրական տարիֆների չափը այն ապահովագրական տարիֆի հետ, որը բերված է սույն «Հուշատետրում» համապատասխան կազմակերպությունների համար։

ԱՊԱՇՈՎԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԻՖԻ ՉԱՓԸ

(Աշխատանքի դասակարգման տեսակներից, ընդունված ԱՄՀԿԽ-ի կողմից)

№№	Ապահովագրման առարկա անունները	Գործող տարիֆը աշխատավարձ. % %
1	Ավտոտրանսպորտ	19,7
2	Տակառագործական արտադրություն	19,7
3	Հացագործական և ողարլիթային հիմնարկ .	17,7
4	Թղթի և ստվարաթղթի արտադրություն	19,7
5	Թաղիքային արտադրություն	21,6
6	Թաղիք-լմիային արտադրություն . .	21,6
7	Ավտոկայան (սպասարկում)	19,7
8	Սայլային տրանսպորտ	19,7
9	Մանկահրապարակ., մանկամսուր., պարտեզ.	10,0

№№	Ապահովագրման առարկա անունները	Գործող տարիֆը աշխատավարձ. % %
10	Գրոֆկազմակերպությունների վակ կինոթատրոններ և ակումբներ . . .	10,0
11	Կաթնագործական (պանրայուղի, քեֆիրի, պանրի, կաղինի և այլն) գործարաններ	13,7
12	Մթերակայաններ	17,7
13	Թեթև և ծանր կառքեր (ձիակառքեր)	19,7
14	Սրճարաններ	10,7
15	Կոոպերացիայի և տնտես. կազմակերպութ. ակումբներ	15,7
16	Գրոֆկազմակերպությունների ակումբներ	10,0
17	Ցերշիկային արտադրություն . . .	17,7
18	Ջավարաղացներ	19,7
19	Մանր անտառագործություն (քրծենիի, մատղաշ կեղևի պատրաստում, պտուղների, կաղնի, սունկի բժշկական տեղախոտի հավաքում և այլն) . .	15,7
20	Խանութներ, կրպակներ (մանրավաճառ և մեծաքանակ-հատավաճառ) .	15,7
21	Խանութներ (մեծաքանակ առևտրի) . .	17,7
22	Խանութներ (մեծաքանակ հատավաճառ) բենզինի, նավթի և նավթա ին թեթև մթերքների	15,7
23	Ձիթագործարաններ (հաթնայն արդյունագործություններ)	13,7
24	Կաթնագործություն	13,7
25	Կաթահանձնման կայաններ	13,7
26	Ոճառային արտադրություն	19,7
27	Առանց ալքոհոլի խմիչքներ (սիրոպ, կվասնաջուր, գազաջուր և այլն) . . .	17,7
28	Նավթի և բենզինի պահեստանոց . .	15,7
29	Աղելու, թթու դնելու աշխատանքի վարձք	17,7

№№	Ապահովագրման առարկա անունները	Գործող ապահովագրական տարիֆը % % չափով
30	Կոոպերատիվի ավերահսկիչ որգանների վարչություններ (Ցերկլսպառմիություն, Ռայսպառմիություն և այլն) . . .	15,7
31	Զոր պտուղների և բանջարեղենի արտադրություն . .	17,7
32	Բեռնման և բեռնաթափման աշխատանքներ (անկախ տնտեսական կազմակերպություններ)	19,7
33	Իջևաններ (քարվանսարա) . . .	15,7
34	Քաղցրեղենի, պաստեղի և պյուրեյի արտադրություն . .	17,7
35	Պրոֆկազմակերպություններ, նրանց հիմնարկներ և ձեռնարկություններ .	10,0
36	Սպառողապերացիայի և պրոֆկազմակերպությունների գյուղատնտեսական ձեռնարկություններ (հացահատիկային, բանջարանոցային, տնասնաբուծական, ձկնաբուծական և այլն անտեսություններ)	7,3
37	Մթերքների, ապրանքների, նյութեղենի գործվածքների, վառելիքի և այլն պահեստանոցներ	17,7
38	Ճաշարաններ, թեյատներ, նախաճաշարաններ. ռեստորաններ	10,7
39	Պանրագործարաններ	13,7
40	Բրնձեղենի և կտրվածքների տեսակավորում ու պահպանում	21,6
41	Ձեռքի վրա աուտուր	15,7
42	Ուսումնական հաստատություններ . . .	10,0
43	Արդյունագործական արտելներում ուսանողներ	10,0
44	Սպորտի և ֆիզկուլտ հիմարկություններ	15,7
45	Պտղաջրերի արտադրություն	17,7
46	Հացագործարաններ	17,7

Ապահովագրական տարիֆը կիրառվում է ամեն մի տնտեսության համար առանձին։

Որինակ, յեթե Շրջսպառմիությունը կամ գյուղկոոպը, բացի վարչական ապարատից, ունի նաև առևտրական ցանց, ճաշարան յերշիկի գործարան, արհեստանոց, փուռ և այլն, ապա ուրեմն դրանցից յուրաքանչյուրի համար յուրաքանչյուրի համար յուրաքանչյուրի համար

Պրոֆմիութեան կողմից վորոշվում է յուրաքանչյուր ապահովագրյալի ապահովագրական մուծումների վճարքի ամեն ամսվա ճիշտ ժամկետները։

Ապահովագրական մուծումները ժամանակին չվճարվելու դեպքում ավելացվում 0,1 տոկ. տուգանք՝ հապաղման յուրաքանչյուր որվա համար։

Տեղական պրոֆկազմակերպություններն իրավունք չունեն վճարումների ուշացման պատճառով հաշվված տուգանքը հանել և զիջել կամ նշանակել ապահովագրական մուծումների վճարման հետաձգումներ. այդ բանը կարող է անել միայն միության կենտկոմը՝ ապահովագրյալի հատուկ միջնորդության դեպքում։

Սոցապահովագրական հիմնական մուծումների պարտքերի ջնջումը թույլ տալ կարող է միայն Համամիութենական Արհմիության Կենտրոնական Խորհուրդը։

Ապահովագրական պատգամավորները պետք է լավ գիտենան, վոր ապահովագրական մուծումները և նրանց վրա հաշվված տուգանքները ամեն մի դեպքում անպայման յենթակա յեն գանձման։

Ապահովագրական մուծումները վճարվում են տվյալ կազմակերպության բանվորներին և ծառայողներին վճարված աշխատավարձի ամբողջ գումարից, բացառությամբ մի քանի աշխատողների կատեգորիայից և աշխատավարձից, վորոնք յենթակա չեն ապահովագրական մուծումների։

ՍՈՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ՅԵՆԹԱՐԿԱ ՉԵՆ

1. Գործակալներ—վորոնք տարածում են գրական հրատարակություններ և վորոնք ստանում

են տոկոսային վարձատրություն (բացի մշտական աշխատողներից)։

2. ԲՈՒՀ երի, Գիտական հետազոտությունների Ինստիտուտների, կլինիկների, լաբորատորիաների աշխատակիցներ (аспиранты)։

3. Արտելներ—վորոնք չունեն կանոնադրություն և ցուցակագրված չեն, և աշխատում են սեփական նյութերով (աշխատանքի արժեքի 50 տոկոսից բարձր)։

4. Ռազմականացված պատցպանություն։

5. Հաստատություններ—վորոնք զբաղված են հաշվանդամների կոոպերացիայի արտելներում իբրև արտելի անդամ։

6. Ուղղիչ աշխատանքներում զբաղվածներ—աշխատանքային ուղղիչ բաժնի կողմից նշանակված ուղղիչ աշխատանքների յենթարկվողները, վորոնք չեն մտնում այն կազմակերպության հետ կապված աշխատանքային պայմանագրում, վորտեղ նրանք աշխատում են։

7. Կոլցնտեսականներ—բացառությամբ աշխատավարձ ստացող կոլտնտեսական—բանվորների։

8. Հ ղ ն ակներ—վորոնք հեռակա դասավանդության համար դասախոսություններ են կազմում։

9. Արդ ունագործական արտելների անդամներ։

10. Աշխատանքային ծառայության կարգով կանչվողներ։

11. Ուսանողներ—ԲՈՒՀ երի, տեխնիկումների, բանֆակների, արհշարժման, խորհկուսդպրոցի։

12. Սեբեենագրաուինիներ—վորոնք տանը, իրենց սեփական մեքենաների վրա աշխատում են ձեռ-

ՀՍՍՌ ԱԱ ԳՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ГСС Армении
ZUUՌ-Арм ССР

նարկությունների և հաստատությունների հաշվառ, բայց նրանց հետ գրավոր աշխատանքային պայմանագրեր չունեն։

ԱՊԱՌԻԿՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ

Եթե ապահովագրյալը չի վճարում ապահովագրական մուծումները և նրանց վրա հաշվված տուգանքները, պրոֆմիության ապահովագրական գանձարկղը ձեռնարկում է ապառիկների գանձմանն, անկախ յեղած պարտքերի ժամկետների վաղեմության։

Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ ապահովագրական ապառիկների գանձումը կատարվում է անվիճելիորեն, պետական տուրքերին և անպայման վճարումներին համահավասար։

Ի՞նչպես է կատարվում պարտքերի գանձումը։

Ապահովագրյալից պարտքերի անվիճելի գանձման միջոցառումների մասին պրոֆկազմակերպության որոշումից հետո, դրա համար լիազորված անձնավորությունը (պրոֆմիության աշխատողը կամ հանրային տեսուչ—վերահսկիչը, կամ ապահովագրական պատգամավորը) պրոֆմիությունից վկայագիր է ստանում՝ պարտքի անվիճելի գանձման համար նրա իրավունքի մասին, որտեղ նշանակվում է ապառքավորի անունը, հիմնական պարտքի և տուգանքի գումարը, վոր ժամանակից է գոյացել ապառիկը և վոր օրից պետք է ձեռնարկվի պարտքի գանձումը։

Ունենալով պրոֆկազմակերպության որոշումը

դ անհրաժեշտ տվյալներ, ապահովագրական պատգամավորը, անմիջապես, ստուգելով ապահովագրյալի ընթացիկ հաշվի դրությունը և նրա գանձարկղի կանխիկ գրամը և ուրիշ կազմակերպություններին նրա ունեցած պարտքերը, վորոշում է նրա հանդեպ ձեռնարկելիք գանձման միջոցառումների մասին։

Ապառիկների գանձման ամենից ավելի ընդունված միջոցառումը՝ ապահովագրյալի կանխիկ միջոցների արգելադրումն է։ Դրա համար ապահովագրական պատգամավորը վորոշում է ապառքավորի կանխիկ միջոցների գումարը և կարգադրում է այդ կազմակերպության ղեկավարին և գանձնապահին՝ սոցապահովագրական գանձարկղին հանձնել յեղած կանխիկ գումարը, ինչպես նաև ստացվելիք միջոցները (յեթե յեղած կանխիկ փողը չի բավականանում)։

Ապահովագրյալի գանձապահը պարտավորվում է իրագործել պրոֆմիության վորոշումը և նախազգուշացվում է, վոր արգելադրված միջոցները նրա կողմից ուրիշ նպատակների համար գործադրման դեպքում, նա յենթարկվում է քրեական պատասխանատվության՝ իբրև պետական միջոցների զողարար։

Յեթե հաստատվում է, վոր ապահովագրյալի ունեցած ընթացիկ հաշիվը լիովին ծածկում է ապահովագրական ապառիկը, ապահովագրական պատգամավորը տալիս է պրոֆկազմակերպության կարգադրությունը այն վարկային հաստատությանը, վորտեղ գտնվում է ապահովագրյալի ընթացիկ հաշիվը՝ նրան արգելադրման համար։

Ստանալով նման կարգադրություն, նույն վարկային հաստատությունը պարտական է ապահովագրյալի ընթացիկ հաշվի գումարը փոխադրել ապահովագրական գանձարկղի ընթացիկ հաշվին, և եթե ապահովագրյալի կանխիկ միջոցները չեն բավարարում նրա պարտքը ծածկելու համար և արգելադրումը չի վերցված, այն ժամանակ վարկային հաստատությունն ապառքավորի հաշվին հետագայում ստացված միջոցները պարտավոր է նույն կարգով փոխադրել՝ մինչև պարտքի լիովին վճարումը։

Գանձման հետագա միջոցառումը լինելու է՝ ապահովագրյալին պարտք ունեցողների միջոցների գանձումը։ Այդ դեպքում ապահովագրյալի պարտապանին հանձնվում է պրոֆկազմակերպության կարգադրությունը՝ նրա ունեցած պարտքը ապահովագրական գանձարկղի ընթացիկ հաշվին փոխադրելու մասին։ Ապահովագրյալի պարտապանի կողմից պրոֆկազմակերպության կարգադրության մեջ ժամանակում, ըստ սովորականի, վարկային հաստատության միջոցով արգելադրվում է նրա ընթացիկ հաշիվը։

Եթե պրոֆկազմակերպությունն սպառել է բոլոր միջոցառումները և կարելիությունները ապահովագրյալի կանխիկ միջոցներից և ընթացիկ հաշվից ապահովագրական ապառիկների լիովին գանձման համար, այդ դեպքում անհրաժեշտ է դիմել ապառքավորի գույքերի վերգրման և վաճառման միջոցին։

Ապրանքների ցուցակագրման դեպքում անհրաժեշտ է նշանակել պրոֆմիության անունը, վերգրումը կատարող լիազորի ազգանունը, ցուցակագրման տեղը և ժամանակը, ապառքավորի անունը, առարկաների անունը՝ նրանց աչքի ընկնող առանձնահատկություններով (գույնը, ձևը, մարկան) և յուրաքանչյուր առարկայի արժեքը, և նշել, թե ում մոտ են թողնվել այդ գույքերը պահպանելու համար։ Վերգրումը կատարվում է ապահովագրական գանձարկղի կողմից լիազորված անձի կողմից, ապառքավորի անպայման ներկայությամբ, իսկ եթե վերջինս մերժի ներկա լինել—միլիցիայի որգանների ներկայացուցչի ներկայությամբ։

Վերգրումը կազմվում է յերկու որինակ, վորոնցից մեկը մնում է ապառքավորի մոտ, իսկ մյուսը հանձնվում է պրոֆկազմակերպության։

Գույքերը ծախվում են կամ ռնմիջական կերպով ապահովագրական գանձարկղի կողմից կամ կարող է հանձնվել ֆինանսական մարմիններին ծախելու համար, ընդ սմին վեր գրված ապրանքները և գույքերը պետք է ծախվեն կառավարական և կոոպերատիվ կազմակերպություններին, և միայն, իբրև բացառություն, կարող են ծախվել հրապարակային աճուրդով։

Ուրեմն ապահովագրական մեծամասնության պարտքերի գանձման միջոցները հանդիսանում են՝

1. Գանձարկղից կանխիկ փողերի արգելադրումը և գրավումը։
2. Վարկաթղթերի արգելադրումը։
3. Ապահովագրյալի բանկում ունեցած հաշիվների և ընթացիկ հաշիվների դուրս գրելը։
4. Ապահովագրյալի սեփական գույքերի և ապրանքների արգելադրումը և վաճառումը։

5. Ապահովագրյալի պարտապանի փողի և գույքի արգելադրումը։

Անվիճելիորեն անցկացնելով գանձումը՝ խորհուրդ ենք տալիս ղեկավարվել վերևը ցույց տրված աղդեցիկ միջոցների կիրառմամբ, չվերացնելով այն՝ մինչև ապահովագրական պարտքերի լիովին գանձումը։

Վոչ մի կազմակերպություն իրավունք չունի արգելք հանդիսանալ կամ կանգնեցնել ապահովագրյալի հանդեպ պարտքերի գանձման համար գործադրվելիք միջոցների կիրառմանը։ Դատական մարմինները, նոտարական գրասենյակները և իրավաբանական հանձնաժողովները չպետք է քննության առնեն ապահովագրական ապառիկների գանձման վերաբերյալ տնտեսական կազմակերպությունների գանգատները, վորովհետև նման գանգատները քննվում են միմիայն պրոֆմիության բարձրագույն կազմակերպության կողմից։

Վարկային հաստատություններ, բանկեր, խնայողական գանձարկղներ, միլիցիայի մարմիններ, գյուղխորհուրդներ, տնային վարչություններ և այլն պարտավոր են կատարել պրոֆմիության լիազոր անձանց վարդադրությունները և ոգնել նրանց պարտքերի գանձման աշխատանքներում։

Այն դեպքում, յերբ ապահովագրյալը, բացի սոցապահովագրական պարտքից, ունի և ուրիշ պարտքեր, այդ դեպքում գործող որենսդրությունը սահմանել է պարտքերը գանձելու հետևյալ հերթականությունը.

ա) առաջին հերթին բավարարվում և բանվորների և ծառայողների պահանջը, և՝

բ) հետո ապահովագրական մուծումների վճարքը։

Ապահովագրյալի մի քանի գույքերը չեն կարող յենթարկվել անվիճելի տուժանքի (արգելադրում և ծախում), այն է՝

ա) պետական գույքերը, վորոնք համաձայն ՌՍՖՍՀ-ի Քաղաքացիական Որենսդրքի 22-րդ հոդվածի, չեն յենթարկվում ոտարացման (գործարաններ, ֆաբրիկներ, արդյունաբերական ձեռնարկություններ, յերկաթուղային ճանապարհներ, տարանսպորտ և նրա կառուցվածքները, ծովային, ոդային արանսպորտ՝ իր կառուցվածքներով և այլն)։

բ) կոոպերատիվ և կոլտնտեսային արդյունաբերական և տնայնագործ արդյունագործական ձեռնարկություններ (շենք, կահավորում, գործիքներ, վորոնք վերաբերում են տվյալ ձեռնարկության արտադրողական աշխատանքներին)։

գ) արդյունաբերական-կոոպերատիվ կազմակերպությունների անբաժան ֆոնդեր։

դ) հումք և վառելիք, վորոնք անհրաժեշտ են հաստատության համար 3 ամսվա ընթացքում։

ե) բնակարանային և տնտեսական շենքերը։

զ) կոոպերացիաների բարձրագույն կազմակերպություններում յեղած կոոպերատիվ կազմակերպությունների բաժնեմուծումներ։

ը) ապառքավորին՝ ապահովագրման համար նշանակված վարձատրությունը։ (Քաղվածք՝ ՌՍՖՍՀ ժողկոմխորհի 1936թ. մարտի 3-ի վորոշումից)։

Պրոֆկազմակերպությունների կողմից պարտք է դանձման գործողությունների մասին տնտեսական կազմակերպությունները կարող են դանգատվել միայն բարձրագույն պրոֆկազմակերպության, որը համենայն դեպս, չի կարող կանգնեցնել ապահովագրական մուծումների դանձման տուգանքները։

ՍՈՑԱՊԱՇՈՎԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրողը պարտավոր է ամեն յեռամսյակին, հետագա յեռամսյակի առաջին ամսվա 18-ից վոչ ուշ պրոֆկազմակերպություններին ներկայացնել անցյալ յեռամսյակի ապահովագրական հաշիվների տեղեկագրերը։

Հաշվային տեղեկագրերի ներկայացման պատասխանատվությունը տրվում է կազմակերպությունների ղեկավարների և գլխավոր հաշվապահների վրա։

Իր ժամանակին հաշվետեղեկագրեր չներկայացվելու դեպքում պրոֆկազմակերպության կողմից տուգանք է տրվում, իսկ սիստեմատիկորեն և չարամիտ կերպով հաշվետեղեկագրերի ներկայացման ժամկետի խախտման դեպքում, հանցավորները յենթարկվում են քրեական պատասխանատվության։

Արգելվում է ապահովագրական հաշվում հաշվակցել այն ծախսերը, որոնք ձեռնարկությունները և հաստատությունները ծախսել են ապահովագրման հաշվին նպաստների և կենսաթոշակների համար՝ այն դեպքում, յեթե այն հաշվետեղեկագրերը, որտեղ մտցված են այդ ծախսերը, ներկայացված է մի ամսից ավելի ուշ, կամ յեթե այդ ծախսերը մտցված են հաշվետեղեկագրում վոչ համապատասխան ամսվա համար։

Ապահովագրողը հաշվետվությունը ներկայացնում է Ռայխմբկոմին ըստ № 4 ձևի։ Ամփոփված հաշվետեղեկագիրը ներկայացվում է Ռայխմբկոմների կողմից յերկրային, մարզային պրոֆկազմակերպության, իսկ վերջինների կողմից միության կենտկոմի ապահովագրական բաժանմունքային գանձարկղին։

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՆԵՐԻՆ ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

Վերստուգելով ժամանակավոր անաշխատունակների համար յեղած ծախսերը, ապահովագրական պատգամավորը, առաջին հերթին, պետք է ստուգի անաշխատունակներին տրված թերթիկների և այդ թերթիկների լցնելն ու կատարված հաշիվների ճշտությունը։

Ամենից առաջ պետք է վորոշվի, թե ով և ինչ ժամանակով է տվել անաշխատունակության թերթիկը, վորովհետև գություն ունեցող որենդրության համաձայն, անաշխատունակության թերթիկը կարող են տալ միայն առողջապահական օրգանների ամբուլատորիաների և հիվանդանոցների բժիշկները և միայն 10 որից վոչ ավել ժամանակով։ Իսկ յեթե պահանջվի ավելի յերկար ժամանակի բժշկություն, հետագա (10 որից ավելի)

որերի համար անաշխատունակության թերթիկներ տալու համար, ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. սեպտ. 4-ի վորոշման համաձայն, անհրաժեշտ է ամբուլատորիայի բժշկապետի կամ այնտեղ հատուկ կազմակերպված հանձնաժողովի թույլատվությունը։

Բացի այդ, ապահովագրական պատգամավորն ստուգում է՝ կա արդյոք անաշխատունակության թերթիկի վրա նպաստ վճարելու մասին պրոֆկազմակերպության թույլտվությունը և նպաստի չափի հաշվումը, ղեկավարվելով ժամանակավոր անաշխատունակներին տրվելիք նպաստի հետևյալ դրույթով.

Ժամանակավոր անաշխատունակների համար նպաստ ստանալու իրավունք ունեն ձեռնարկություններում և հաստատություններում աշխատող բոլոր բանվորները և ծառայողները, իրենց մասնագիտությունը բարձրացնելու և վերավորակավորման ու կադրերի պատրաստության կուրսերում սովորողները, վորոնք ուսումից առաջ աշխատել են վորպես բանվորներ և ծառայողներ։

ՆՊԱՍՏ ՏՐՎՈՒՄ Է

1. Եթե անաշխատունակությունն առաջ է եկել աշխատանքի ընթացքում, ներառյալ և փորձարկման ժամանակը։

2, Աշխատանքներից արձակված որից 15 որվա ընթացքում առաջացած անաշխատունակության համար, պայմանով, վոր աշխատողը հաշվի չի անցված պրոֆկազմակերպություններում, ունի

2 տարվանից վոչ պակաս ստաժ, ներառյալ վերջին տարվա ընթացքում 6 ամսից վոչ պակաս անընդհատ աշխատանք։

ՆՊԱՍՏ ՉԻ ՏՐՎՈՒՄ

ա). Աշխատանքից ինքնակամ հեռացողներին (առանց վարչության համաձայնության)։

բ) Ներքին կանոնադրության խախտման համար հեռացվածներին։

գ) Ձերբակալման և դատական բուժական հետաքննության ժամանակ հիվանդացողներին։

դ) Դիտմամբ իրենց առողջությունը վնասողներին և գործալիքներին։

ե). Հարբեցողության պատճառով հիվանդացողներին (թունավորում, հաշմանդամություն, ջարդվածք)—առաջին հինգ որերում նպաստ չի տրվում։

զ). Բժշկի կարգադրությունները չկատարողներին (այս դեպքում նպաստ չի տրվում պրոֆկազմակերպության վորոշումով)։

Ապահովագրյալների խմբերը	Նպաստի քանակը միջին աշխատավարձի չափերով			
	Հիվանդության առաջին 5 օրերին	Հետագա 6-ից մինչև 15-րդ հիվանդ. օրերին	Հիվանդության 16-րդից մինչև 20-րդ օրերին	21-ից սկսած հաջորդ հիվանդության օրերին
1	2	3	4	5
Ժողովրդական տնտեսության սոցիալիստական հատվածի բանվորները և ծառայողները.				
Ա. Պրոֆմիությունի անդամներ				
1. Բանվորներ յեվ ծառայողներ (բացի գյուղատնտեսական աշխատողներ), արդյունաբերական ձեռնարկություններում զբաղվածներ. շինարարության վրա, տեղական տրանսպորտում աշխատողներ յեվ ինժեներա-տեխնիկական աշխատողներ (անկախ նրանց աշխատանքի վայրից).				
ա) Տվյալ ձեռնարկության մեջ 2 տարուց վոչ պակաս անընդհատ աշխատողներ և 3 տարուց վոչ պակաս աշխատանքի ընդհանուր ստաժ ունեցողներ	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ
բ) Տվյալ ձեռնակության մեջ 2 տարուց վոչ պակաս անընդհատ աշխատողներ, բայց 3 տարուց պակաս աշխատանքի ընդհանուր ստաժ ունեցողներ . .	Յերեք քառորդ	Յերեք քառորդ	Յերեք քառորդ	Լրիվ աշխատավարձ
գ) Տվյալ ձեռնարկության մեջ 1-ից մինչև 2 տարի անընդհատ աշխատողներ.	Յերկու յերրորդ	Յերկու յերրորդ	Յերկու յերրորդ	Լրիվ աշխատավարձ
դ) Տվյալ ձեռնակության մեջ մի տարուց պակաս աշխատողներ	Յերկու յերրորդ	Յերկու յերրորդ	Յերկու յերրորդ	Յերկու յերրորդ
ե) Հարվածային բանվորներ և ինժեներա տեխնիկական աշխատողներ, վորոնք ունեն մի տարուց վոչ պակաս աշխատանքի ստաժ, անկախ անընդհատ աշխատանքի յերկարությունից . . .	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ

1	2	3	4	5
II. I. Հատվածում հաշվված ձեռնարկությունների գրասենյակում զբաղված աշխատողներ.				
ա) Տվյալ ձեռնարկության մեջ 2 տարուց վոչ պակաս աշխատողներ, 3 տարուց վոչ պակաս աշխատանքի ստաժով.	Ցերեք քառորդ	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ
բ) Նույնը, բայց առանց 3 տարվա աշխատանքային ստաժի	Ցերկու յերրորդ	Ցերկու յերրորդ	Ցերկու յերրորդ	Լրիվ աշխատավարձ
գ) Տվյալ ձեռնարկության մեջ 1-ից մինչև 2 տարի աշխատողներ	Ցերկու յերրորդ	Ցերկու յերրորդ	Ցերկու յերրորդ	Լրիվ աշխատավարձ
դ) Տվյալ ձեռնարկության մեջ մի տարուց պակաս աշխատողներ	Ցերկու յերրորդ	Ցերկու յերրորդ	Ցերկու յերրորդ	Ցերկու յերրորդ
III. Մինչև 18 տարեկան դեռահաս բանվորներ և ծառայողներ:				
ա) մեկ տարուց վոչ պակաս անընդհատ աշխատողներ	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ
բ) մի տարուց պակաս աշխատողներ	Ցերեք քառորդ	Ցերեք քառորդ	Ցերեք քառորդ	Լրիվ աշխատավարձ
IV. Կարմիր զվարդիականներ կարմիր պարտիզաններ, ԽՍՀ Միության կամ Միութե-				

1	2	3	4	5
նական հանրապետությունների մեկի կողմից շքանշանով պարգևատրված ներ — բոլոր թվարկյալները անկախ աշխատանքի ստաժից:	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ	Լրիվ աշխատավարձ
Y. Փնացյալ բանվորներ յեվ ծառայողներ				
ա) Տվյալ ձեռնարկության և հիմնարկության մեջ 2 տարուց վոչ պակաս աշխատողներ և 3 տարուց վոչ պակաս աշխատանքի ստաժունեցողներ	Ցերեք քառորդ	Ցերեք քառորդ	Ցերեք քառորդ	Լրիվ աշխատավարձ
բ) Նույնը, բայց 3 տարվա ստաժ չունեցողներ	Ցերեք քառորդ	Ցերեք քառորդ	Ցերեք քառորդ	Լրիվ աշխատավարձ
գ) Տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության մեջ 1-ից մինչև 2 տարի աշխատողներ.	Ցերկու յերրորդ	Ցերկու յերրորդ	Ցերկու յերրորդ	Լրիվ աշխատավարձ
դ). Տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության մեջ մի տարուց պակաս աշխատողներ.	Ցերկու յերրորդ	Ցերկու յերրորդ	Ցերկու յերրորդ	Ցերկու յերրորդ
Բ. Պրոֆմիությամբ անդամ չեղողներ				
Ստանում են նույնատ, անկախ նրանց աշխատանքային ստաժի՝ հետևյալ չափերով	Կես աշխատավարձ	Կես աշխատավարձ	Կես աշխատավարձ	Կես աշխատավարձ

Հիվանդության 31-րդ որից պրոֆմիության անդամ չեղողներին տրվում է աշխատավարձի 2/3-ի չափ նպաստ։

Հետո, ապահովագրական պատգամավորն ստուգում է, թե ինչպես է կատարվում ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. սեպտ. 4-ի վորոշումը՝ արտադրական կազմակերպությունների կողմից ժամանակավոր անաշխատունակների համար ծախսված գումարների մասին տեղեկումներին և Ռայխմբկոմներին՝ ամեն ամսվա 3-ին և 18-ին ներկայացվելիք կիսամյա հաշվետվությունը, և վորոշել, թե կազմակերպության կատարած ծախսերն իսկապես անց են կացվել այդ հաշվետվության մեջ, թե՞ վոչ։

Ցուրաքանչյուր ապահովագրյալի առաջնահերթ և ամենալուրջ խնդիրներից մեկը—դա հիվանդությունների նվազումը և ժամանակավոր անաշխատունակների վրա յեղած ծախսերի իջեցումն է։ Այդ պատճառով սխալ կլինի, յեթե ապահովագրական պատգամավորը բավականանա միայն անաշխատունակներին տրված թերթիկների և նրանց հաշիվների ստուգմամբ, և միջոցներ չի ձեռնարկում մեր միության անդամների հիվանդացման պատճառները հեռացնելու համար։

Նվազեցնելով հիվանդությունների և ժամանակավոր անաշխատունակների համար յեղած ծախսերը, ապահովագրական պատգամավորը դրանով խնայում է պետական միջոցները, վորոնցից 75 տոկոսը, ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. սեպտ. 4-ի վորոշումով, տրվում է տեղկոմներին և

Ռայխմբկոմներին մեր միության անդամների կուլտկենցաղային դրության բարելավման համար։

ՀԵՏՊԱՀԱՆՋՄԱՆ ՀԱՅՑ
(РЕГРЕССНЫЙ ИСК)

Այն դեպքում, յեթե ժամանակավոր կամ մշտական անաշխատունակությունն առաջ է յեկել ձեռնարկության կամ հիմնարկության վարչության հանցագործ վերաբերմունքի կամ անհոգության պատճառով (աշխատանքի, ողափոխության, պատքաշելու, հատակների, սանդուղքների, միջանցքների, շենքերի սանիտարական դրության բացակայությունը և այլն), վորոնք վարչության հանցանքով պատճառ են յեղել ապահովագրյալի հիվանդության կամ հաշմանդամության, և կամ, յեթե հենց ձեռնարկությունն է պատճառ յեղել ապահովագրյալի հաշմանդամության (յերկաթուղիներ, տրամվայ և այլն), այդ դեպքերում պրոֆմիությունը պարտավոր է հետպահանջման հայց ներկայացնել իսկական հանցավորներին (արտադրության կամ հիմնարկության վարչություններին, կազմակերպություններին, վորոնց հանցանքով է յեղել վնասը), փոխհատուցում պահանջելով ապահովագրյալի վրա յեղած սոցապահովագրական ծախսերի համար (նպաստ, կենսաթոշակ)։

Հետպահանջման հայց ներկայացվում է աշխատանքի պաշտպանության տեսչի կամ ժողովրդական դատարանի յեզրակացման հիմքերի համաձայն, դժբախտ պատահարի կամ վնասի պատ-

ճառման (պետական կոոպերացիաների և հասարակական կազմակերպությունների հանդեպ) որից մեկուկես տարվա ընթացքում, իսկ մասնավոր անձանց հանդեպ՝ 3 տարվա ընթացքում։

Դիմումներում ցույց է տրվում հայցատուի և պատասխանատուի հասցեները, հայցի գումարը, գործի հանգամանքները և դրանց կցվում է անհրաժեշտ փաստաթղթեր—դժբախտ պատահարի մասին կազմված ակտը, միլիցիայի արձանագրությունը և ապահովագրական գումարից վճարված փոխերի մասին տեղեկանք։

Պրոֆմիությունն կենտկոմն առաջարկում է հատուկ ուշադրություն դարձնել ներկայացված հետպահանջման հայցերի վրա, որովհետև դատարանի միջոցով ապահովագրյալի վրա ծախսված ապահովագրական միջոցները հանցավորներից գանձելով, մենք պարտավորեցնում ենք տնտեսական կազմակերպություններին վճռական միջոցներ ձեռք առնելու՝ արտադրության մեջ աշխատանքի պայմանների բարելավման համար և կբճատում ենք ժամանակավոր անաշխատունակների համար յեղած ծախսերը։

Ապահովագրական պատգամավորը յերբեք չը-պետք է մոռանա, որ ակտիվ կերպով աշխատելով սոցապահովագրական մուծումների և պարտքերի գանձման աշխատանքների կատարման և գերակատարման ուղղությամբ, պայքարելով գործալքության և ժամանակավոր անաշխատունակության համար յեղած միջոցների գերածախսման հանդեպ, վերահսկելով սոցապահովագրության ֆինանսական դիսցիպլինայի պահպանման, դրանով իսկ նա անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ապահովագրական մուծումների գանձման գերակատարումով ստանալ 50%, որը հատկացվում է մեկ միության անդամների կուլտուրական-զային և նյութական սպասարկման բարելավման համար։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС. Библиотека
ZUUՌ-Арм ССР
Ա. ԱՍՍՍՐ-ԻՍՅԱՆ անվան

Ответ. редактор А. Г. Аваков
Пом. техред. Д. М. Джинибалаян

Сдано в набор 10 октября 1936 г. Подписано в печать 31 октября 1936 г. Формат А6—101x144. Об'ем 1 1/8 п. л. Тираж 500. Уполкрайлит № О-2101. Заказ № 526.

Типография краевого армянского изд. „ГРО"
Ростов-Дон, Ворошиловский пр., № 27

«Ազգային գրադարան»
NL0218928

44.051
523
ШТАОС
Ч.5
8т1

На армянском языке

Памятка страхделэгату по соцстраху

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО „ГРО“
Ростов н-Д, Ворошиловский, 27

ԳՐԱՊԱՀԱՍՏԱՆ
Ռոստով-Դոն, Մոսկովսկայա փող. № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)